էգրիս, էրգումէֆ բերդ, 1*րդ*, 2*րդ*, Որբուլի, Մթնդեր, Աղիտ-Գոմ *եւ* Ագրակ *առուակները. ձախից՝* Բաշ-գեղ, Վերաճ-Բերդ, Տուրի, Չիլխորոզ, Գայմաս, Փորշունի, Ջադրագոմ, Ոսկիհաթ, Ակ-Բիլիսէ *առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարտէզներով: Ապա Դումբուլի առ. իջնելով Դէյիքլի-Դաշ լեռներից եւ անցնելով ձորը միանում է Բարդուղին: Դումբուլի առ.ի ակունքը* Օյուկ-Թաշ[1] ա*պառաժից է, որ անցնում է* Զատախ, Կաջարթի, Սուլէյմանի, Նիգիջուկ, Ջանիկ[2], Ջրոտ, Դագեր *եւ* Դարբանք[3] *գեղերի միջով միանում է Բարդուղ չային*, Ճաթակ *կամ*

եւ աւերակներ կան, որոնք Դից արտայայտուած վայրերը լինելու են քանի որ ժողովուրդը դրանց մէջ եղած տաճարների տունը «Օջախ» է անուանում, որը գերագոյնի արտայայտուած բնակարաններ են համարում:

1 *Օյուք-Թաշ կամ Օյուկ-Թաշ լեռան ապառաժի վրայ կայ սեպաձեւ արձանագրութիւն որը մի քանի անգամ քննուած է: Սարի Ղամիշ անտառից ոչ շատ հեռու Գագարա գետակի եւ Ջամուշ-սրթ լ-րի մէջն է Օյուք-Թաշը, որ ունի հին անցեալ եւ Բարդուղը կապում է Ասորի ինքնակալութեան շրջանին:*

2 *Ջանիկ գեղը իր աւերակներով Բարդուղի աւազանում յիշեցնում է որ ճաները այստեղ էլ գաղութներ ունեցել են:*

3 *Դարբանք նախընթաց գլուխներում Դարփինք, Դարփնոց — փականագործ եւ երկաթի հալոցի տեղերը. փչացուած անտառները արդէն ցոյց են տալիս. իսկ այստեղ Դարբանքը — Դարբաս պարսկերէն բառի իմաստով է գործածուած, քանի որ այս գեղը երկաթի դուռից ջոկ ունեցել է նոյնպէս անցք — ճանապարհ Վանանդից Ճորոխի խորքերը մտնելու:*